

# ՄԱՍԿ

Տարեկան արժեք 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:  
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից համարըստան միջ:

Օտարադատարարի պիսիմ են ուղղակի  
Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաջտեղի 10—2 ժամ  
(Բացի կիրակի եւ տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար զեմարում են  
խորանայի րոտին 2 կոպեկ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան օրդան.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. ՎՈՅՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱՍԿՈՒԹԻՒՆ: Արաքսի լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՊԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. ԴԱՎԻԹ ԲԷԿ:

## ԿՈՎԿԱՍԵԱՆ ՕՐԴԱՆ

Ընթերցողը յիշում է որ մենք շատ անգամ այն միտքն ենք յայտնել թէ հարկաւոր է ուսում մայրաքաղաքներին միտում հիմնել ուսուցիչ լեզուով մի լրագիր, թէ կուզ շարաթաթերով, որի մէջ մենք, կովկասցիներս, առանց ցեղի եւ կրօնի խնդրութեան, կարողանայինք պաշտպանել մեր երկրի բարոյական, տնտեսական եւ հասարակական շահերը: Կենքը քանի գնում է, նրա կենսական, առօրեայ պահանջները բազմանում են եւ աւելի ու աւելի զգալի է լինում մեզ համար այդ տեսակ թերթի անհրաժեշտ պահանջը:

Ինչպէս ամեն տեղ, ասում ենք, մեր երկրի պայմանները աւելի եւ աւելի բաղադրեալ են դառնում հասարակական կենսական զարգացման հետ միասին, բայց դաւաճական մամուլի դրութիւնը բացառական

լինելով, մեզ անհնարին է գրել այստեղ այն, ինչ որ կարող էինք գրել Ս. Պետերբուրգի կամ Մոսկվայի մի լրագրում, որ հրատարակւում է առանց ցենզուրայի:

Բայց դրա համար մենք կովկասցիներս, չէր կարողանալով մեր երկրում մի օրդան ունենալ, որ կատարելապէս արտայայտէ մեր առօրեայ պահանջները, պէտք է մայրաքաղաքներից միտում ունենայայինք մի սեփական օրդան, որ մասնաւորապէս պարագրէր կովկասեան կենսական, որովհետեւ, ինչպէս մենք համոզվեցինք մեր դառն փորձից, անդադար թղթապահով մայրաքաղաքների թերթերին, ուսում ազատամիտ թերթերը գուցէ բռնաւարտած լինելով ներքինով, շատ քիչ ուշադրութիւն են դարձնում մեր հեռաւոր երկրի վրա, շատ անշնչաւ են տալիս կովկասեան թղթապահութիւններին, կարծես ականջ կերպով զետեղում են ժամանակ առ ժամանակ մեր թղթապահութիւնները մեր հասարակական կենսական մեծապայքով խնդիրների վրա:

Մամուլը այն հասարակական նշանակութիւն ունի, որ կարող է նախատեսել այս կամ այն երեւոյթ եւ այդպիսով թէ հասարակութեանը եւ թէ կառավարութեանը մեծ օգուտ բերել: Բայց մեզ թոյլ է տրվում գրել երեւոյթների հետեւանքների վրա մի-

այն, իսկ բազմաթիւ թղթապահութիւնները, որոնք կարող էին բացատրել պատրաստվող անցքերը, մնում են մեր պարտքէն: Մենք կարող ենք օրինակի համար տալ մի թղթապահութիւն այն ջարդի մասին, որ քրիստոնեաները տուեցին թուրքերին Բագու քաղաքում, երբ որ ցաւալի իրողութիւնը արդէն կատարված է, բայց նախընթաց եւ ընդթիւնը եւ անբաւականութիւնները բացատրող թղթապահութիւնները մնում են անգործագրելի մեր խմբագրական սեղանի մէջ: Առաջուց յայտնել որ ժողովրդի մէջ դժգոհութիւն կայ Բագուի պոլիցէյմէստրի դէմ, — անկարելի է, այն ինչ գրանով գուցէ առաջ կանգնէր տխրալի անցքի: Բայց յայտնել իրողութիւնը որ ժողովուրդը քաղաքի արձակից պոլիցէյմէստրի վրա, կանգնելով որ չէ կամենում ունենալ թուրք պաշտօնական պոլիցէյմէստրի մէջ, — այդ կատարված է եւ ուրեմն նրա առաջն առնել անհնարին է:

Այսպիսով լրագրութիւնը չէ համարում իր նպատակին:

Մենք մեզ մօտ չենք կարող գրել, իսկ մայրաքաղաքի ուսում ազատամիտ մամուլը արհամարհանքով է վերաբերվում դէպի

հեռաւոր երկրի կենսական շահերը: Մնում է մեզ ուրեմն, ցանկանալ որ մայրաքաղաքներից միտում հարուստ հայերը հիմնեն մի փոքրիկ, թէ կուզ շարաթաթեան օրդան, որ մայրաքաղաքի կովկասեան խնտեւրիցնայի առաջնորդութեամբ եւ մեր աշխատակցութեամբ կարող էր արտայայտիչ դառնալ մեր օրական պէտքերի:

Այդ անհրաժեշտ հարկաւոր է, մինչեւ որ դաւաճական մամուլը ազատված կը լինի ցենզուրայից:

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տեղական լրագիրները հազարգում են որ մայիսի 2-ին Նորին Կայսերական Բարձրութիւն կովկասեան փոխարքան թողցել Ս. Պետերբուրգ, ուղեորվելով դէպի Թիֆլիս: Այստեղ նա կը յանձնի փոխարքայութեան գործերը եւ մի քանի շաբաթից յետոյ կրկին կուղեորվի Ս. Պետերբուրգ եւ այնուհետեւ իր ընտանիքով ճանապարհ կընկնի դէպի Լմա եւ Կարլսբադ:

Յօդուտ որբանոցի որ հիմնվում է Թիֆլիսում հանգուցեալ Կայսրի անունով, մեր խմբագրութեան մէջ հաւաքած 350 րուբլ գումարը մենք արդէն յանձնեցինք փոխարքայի օգնականի կը-

տանում Բաղայ երկիրը, \*) եւ երբ հասան Տաթևի հանդէպ, այդ միջոցին վրա հասան մի գուռեղ սպառազինված պարսիկներ: Նրանք կամենում էին առեանգել չքնադաղեղ օրիորդին եւ իրանց թաղաւորի համար տանել: Օրիորդը անօրէնների ձեռքը չընկնելու համար, երեսը խաչակնքեց, մորակեց իր ձին, եւ ահագին բարձրութիւնից դահլիճէ մէջ խորին անդունդի մէջ, Աստուծոյ հրեշտակները նրան օգնութեան հասան, եւ կարծես կտուքի մէջ նստած, անվնաս իջաւ անդունդի յատակի վրա: Նոյն տեղում բարեկաշտ օրիորդը չինեց մատուց. եւ այնուհետեւ իր անձը նուիրեց ձգնութեան: Վերջը այդ մատուցը կուսանոց դարձաւ: Նա իր հարստութեան կէսը բաժանեց կարօտեալներին, իսկ մնացածը նուիրեց մեր վանքին: Շնորհիւ սասմաններից սկսած մինչեւ Գլխական գետը, մեր ունեցած կալուածքների բոլորը նրա ընծայածն է: Իսկ այդ գեղեցիկ արկղիկի մէջ պահում էր նա իր հարստութեան գոհարեղէնները: Նա այդ գոհարեղէնները վաճառեց, արծաթե բաժանեց աղքատներին, իսկ արկղիկը նուիրեց մեր վանքին, որ դրա մէջ պահվի սուրբ Աստուածածանի գիտակները:

— Աստուած հոգին լուսաւորեցէ, պատասխանեց ձերունի արեղան: — Մենք այսուհետեւ սուրբ Աստուածանի գիտակները մի համարակալութիւն մէջ կը պահենք, այդ մասին եւ հաւատացած եմ, որ սուրբ Աստուածածինը չի բարկանայ:

— Եւ էլ կարծում եմ, որ չի բարկանայ, պատասխանեց արեղանը եւ վեր առեց արկղի միջին մի արծաթե բուրվառ:

— Այս բուրվառը, ասաց նա, — Սիւնեաց տիկին Շուշանի նուէրն է: Նա Աշոտ իշխանի ամուսինն էր: Դրա ժամանակում վայոց ձորի լեռների մէջ ցրված էին մի կարգ կրօնաւորներ, որոնց չխոտաճարակներ \*\*) էին կոչում: Եւ իրաւ, այդ ձգնաւորները ոչ հաց, ոչ միս եւ ոչ էլ այն բոլոր ուտեստները, որ գործ են ածում մարդիկ, չէին ուտում: Կերակրվում էին

\*) Բաղայ երկիրը այժմեան Ղարաբաղն է:  
) Խոտաճարակ նշ. խոտով կերակրվող:

## ԴԱՍԻԹ ԲԷԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

(1722—1728)

Է.

Տաթևի վանքը թէ իր շինուածքների ընդարձակութեամբ եւ թէ իր ամրութիւններով ամեն յարմարութիւններ ունէր բերդի տեղ ծառայելու: Այս պատճառով Դասիթ Բեկը ընտրեց նրան օրպէս կենտրոն իր գործողութիւնների:

Կար եւ մի ուրիշ բան. այդ վանքը, որպէս Սիւնեաց աշխարհի հոգեւոր կառավարութեան մայր աթոռը, ունէր անաղին հարստութիւն: Վանքի միաբանութիւնը իր հարստութիւնը դրեց բեկի արամադրութեան ներքոյ, իրաւունք տալով նրան, գործ ածել իր պատերազմական ծախքերի համար, որպէս կը բարեհաճէ: Աւելի քան ութ հարիւր տարի գոյութիւն ունեցող այդ վանքը, զարբեր ընթացքում, զիջել էր արծաթի, ոսկու, թանկագին քարերի մեծ քանութիւն: Ամեն մի թագաւոր, ամեն մի թագուհի, ամեն մի իշխան եւ իշխանուհի, իր հոգու փրկութեան համար, նուիրել էր վանքին՝ որը գիւղ, որը քաղաքակ, որը ընդարձակ անտառներ, որը թանկագին անօթներ, խաչեր եւ այլն, ջանադան ժամանակներում պատահած յափշտակութիւնները, աւարառութիւնները չէին բարոյացնել բուրբուր սպառել այդ անաղին հարստութիւնը: Վանքի գաղտնի պահարանները խիստ ապահով տեղեր էին սպասաւանդների ձեռքից նրանց պահպանելու համար:

Վանահօր կացարանը բաղկացած էր մի քանի սենականներից, որոնց դռները բացվում էին միմեանց մէջ: Գրանցից մէկը, որ ետեւ կողմումն էր, ունէր մի նեղ լուսամուտ միայն առաստաղի մօտ եւ այնքան մութն էր, որ ցերեկով եւ պէտք էր ճրագ վառել մի բան տեսնելու համար: Այստեղ միայնակ նստած էր մի ձերունի արեղան, որ նրա առջև դրած էր մի շարժական քուրա, որ ասիական ոսկերիչների հալոցի ճիշտ նմանու-

թիւնը ունէր: Նա մի ձեռքով փշում էր փութը, իսկ միւսով, որով բռնած ունէր փութիկ ունէր, անդադար շարժում էր անօթները, որ աւելի շիկանան, որ աւելի բոցավառվեն: Ածուխների մէջ ծածկված էր մի մեծ բութակ, \*) որի մէջ հալվում էր մետաղ: Գերունի արեղան դեռ իր գործողութիւնը չէր վերջացրել, երբ նրա մտաւ վանահայրը՝ Ներսէս արքայաւոր:

— Տեսնում եք, վահան հայր սուրբ, ասաց նա ձերանդիւնով, — ձեր ոսկերչութիւնը վերջապէս պէտք եկաւ մեզ:

Վահան հայր սուրբը միայն բարեսրտութեամբ ժպտաց եւ շարունակեց փութը փշել: Նա իր պատանեկութեան հասակում, իրաւ, ոսկերչի աշակերտ էր, վարպետից փախչելով, եկաւ վանքը եւ արեղայ դարձաւ:

— Այդ ինչ էք հալում, հարցրեց արքայաւոր, — Նա ինչ էք հալում, հարցրեց արքայաւոր:

— Սուրբ սրբանշնչաբարձր, ալը, պատասխանեց արեղան, եւ նկատելով, որ մետաղը բուրբուրվի հալված էր, բութակը ունէրով դուրս հանեց քուրայի միջին եւ հեղուկ դարձած արծաթե խնամքով ամեց մի կարգաւոր մէջ, իւր ստուշելով, երկայն չերտի ձեռքով ձեռքով կաղապարի միջին դուրս հանեց չերտը, դրեց միւսների մօտ, որ զիջված էին միմեանց վրա:

Վանահայրը սկսեց համբարել արծաթե չերտերը: Երբ վերջացրեց, նա դարձաւ դէպի ձեռնի արեղան, հարցնելով.

— Երեւում է, դեռ բոլոր չէք վերջացրել, վահան հայր սուրբ: — Ես էլ մնացել:

Չը սպասելով վահան հայր սուրբի պատասխանին, որն ինքն էլ չը գիտէր, թէ որքան է մնացել, — վանահայրը մօտեցաւ մի անաղին արկղի, որ չինված էր ամուր սե փայտից եւ գաճաճ երկաթներով: Նրա մէջ լցրած էին զանազան արծաթե անօթներ, խաչեր, բուրվառներ, աշտանակներ եւ այլ եկեղեցական սպասքներ:

Վանահայրը վեր առեց մի գեղեցիկ սկիւճ, ըստ կեցի նայել: Սկիւճի պատուանդանի վրա բաւական հարաբարութեամբ քանդակած էր նուիրողի անունը: Վանահայրը կարդալով այդ, ասաց.

\*) Բութակ կամ բութա նշ. հալոց:



է նրանց սահման դնել մինչև անգամ ամեն նամեք բռնութեամբ:

Բոլոր դարերի պատմութիւնը վկայում է, որ գաղափարները չեն մեռնում մինչև անգամ հազարաւոր մահուան պատիժներէն: Իսկ գերմանացիները կամենում են սպանել ուրիշներին մէջ նոյն իսկ այն գաղափարներէն, որոնց իրանք ձեռնարկեցին և կանգ տուին, կարծելով, որ կարելի է նրանց գերմանացիներին բացառական սեփականութիւն դարձնել: Ահա այնքան Պոլսեանի և Սիւնի գիւղի մէջ, գանդապներին Շիւզիլի-Հոլշտայնի մէջ գերմանացիները զրկեցին մայրենի լեզու գործածելուց ոչ թէ միայն հրապարակական նիստերի և դատարաններին մէջ, այլ և ժողովրդական ուսումնարաններին մէջ: Այս ժամ նոյնպէս կամենում են վարժել Նիգամի և Լոտարինգիայի բնակիչներին հետ: Մի թէ կարելի է զարմանալ և ոչ չէ կը լինի մեղաւորը, որ այդ վարմունքը այս երկու նահանգներին մէջ նոյն հետեւանքները կունենայ, ինչ որ առաջիններին մէջ, այսինքն, որ ազգայնութեան զգացմունքը աւելի մեծ ոյժ կը ստանայ և ընդհանուր համակրութիւնը գէպի գերմանացիները կը փոխի առեւտրութեան և թշնամութեան:

Ելգացիները ծագումով բուն գերմանացիներ են, բայց 200 տարի Ֆրանսիայի իշխանութեան տակ մնալով, նրանք մինչ այն աստիճան ֆրանսիացի են, ըմբռնել են ֆրանսիացու ոգին և վարք ու բարքը և այնքան սիրել են ֆրանսիա, որ իրանք չեն կամենում իրանց գերմանացի ճանաչել: Այնու ամենայնիւ թէպէտ նրանց ազգայնութեան զգացմունքը ֆրանսիական է, նրանց չէ կարելի ֆրանսիացի անուանել: Աւելի լաւ է ասել, որ նրանք մի առանձին, փոքրիկ ազգութիւն են կազմել, որ ունի թէ ֆրանսիացիներն և թէ գերմանացիներն զլիաւոր յատկանիշները: Արդ՛հետեւ Ելգասի և Լոտարինգիայի բնակիչները թուով շատ չեն, հասկանալի է, որ նրանք անկարող էին ազգային անկախ մարմին կազմել և շատ քիչ զարգանալ այդ ուղղութեամբ: Նիգամի նրանք ֆրանսիայի իշխանութեան տակ մնալով, երբեք ամենակարճ միջոցի մէջ կատարելապէս ֆրանսիացիներ կը դառնային, իսկ գերմանիայի իշխանութեան տակ գերմանացի: Բայց այժմ նրանց մէջ նկատուում են ինքնազոյնութեան ձգտումներ և զրա պատճառն է ինքնավարութեան գաղափարը: Այդ երկու նահանգներին բնակիչները, որոնք մինչև այժմ գերմանացիներին անհաշտ թշնամիներ էին և միայն զգուսնքով էին արտասանում գերմանիայի անունը, այժմ սկսել են հաշտուել գերմանիայի տիրապետութեան հետ այն ժամանակից, երբ այդպէս անուանված «կայսերական երկիրները» արտօնութիւն ունեցող նահանգներ են դարձրած, որ յոյս տուեց նրանց մի ժամանակ գերմանական միութեան մի անկախ մասը կազմել գերմանական փոքր պետութիւնների նման:

Բարձր Մանտեյֆել, որ քանի գնում է աւելի ազատամիտ է դառնում, որ յարգում է խելացի ազատութիւնը և խոստովանվում է, որ կառավարիչները ոչ թէ միայն պէտք է հնազանդվել, այլ և ձայն ունենան կառավարութեան մէջ, շուտով նկատեց Ելգացիներին այդպիսի տրամադրութիւնը և գնահատեց նրա օգտակարութիւնը գերմանիայի համար: Նա այնքան լաւ հասկացաւ այդ գործի կարևորութիւնը, որ ավտօնօմիսանքը շուտով կառավարչական կուսակցութիւն կազմեցին: Մի և նոյն ժամանակ կամենալով ապացուցել, որ «կայսրը նրան ուղարկել է երկրի

հին վերքերը բուժելու և ոչ թէ նորերը հասցնելու համար», Մանտեյֆել խոստովանում է, որ վարչերի հրոսակի նման յարձակվել էին այդ նահանգի վրա և այնտեղ այնպէս էին գործում, ինչպէս թշնամութեան երկրում: Նրա այդպիսի վարմունքը շատ արգելքների հանդիպեցաւ, որոնցից մի քանիսն նա յաղթեց, բայց վերջը սկսեցին խօսել, թէ այդպիսով գերմանական տարրը ձնշլում է, իսկ Ելգացիները արտօնութիւններ են ստանում: Սրա հետեւանքն այն եղաւ, որ պարլամենտին առաջարկեցաւ վերոյիշեալ օրինագիծը առանց Մանտեյֆելի գիտութեան և թէպէտ վերջը առ շատ բողոքեց այդ օրինագիծը, աւագացանկով, որ ֆրանսիական լեզուի արգելքը, քանի որ բնակիչներից շատերը գերմաներէն չը գիտեն, աւելի էլ կը մեծացնէ ֆրանսիայի ազդեցութիւնը, բայց այլ ևս չէր կորելի նախագիծը յետ առնել:

ԱՐՏԱՔԱՆ ԼՈՒՐՆԵՐ

—Կ. Պոլսից հաղորդում են Վիեննայի «Polit. Corresp.» լրագրին, որ յունադաւան պատրիարքի նուիրակ Ստամբուլի-Էֆենդին, այդ պատրիարքի յանձնարարութեամբ ներկայացաւ հայոց Ներսէս պատրիարքին, որպէս զի յայտնէ նրան յոյն պատրիարքի և համայնքի պաշտօնակիցները, որ Ներսէս սրբազանը իր պաշտօնից հրաժարական է տալիս: Ներսէս պատրիարքից որ նրան թանգ է ուղղափառ եկեղեցու և պատրիարքի այդ համակրութիւնը, բայց այլ ևս չէ կարող պատրիարքական կառավարութեան ծանր բեռը կրելու: Հաւատացնում են, որ պատրիարքի հրաժարականի պատճառը այն անտարբերութիւնն է, որով Ք. Գառը ընդունում է վերջին ժամանակները Ներսէսի բոլոր իրաւացի գանգառները հայերի հետ իշխանութեան կողմից վատ վարուողութեան մասին:

—Մայիսի 5-ին Փարիզում կայացաւ մի ճաշ կերոյթ ստրկութեան վերջնելու տարեգործի աւելիով: Այդ ճաշկերոյթին զամբաստան մի ճառ ասեց բարձրագոյնը կենաց բաժակը ի պատիւ ֆրանսիացի բոլոր քաղաքացիներին, առանց ցեղի և գոյնի խտրութեան և յիշեցրեց, որ 1848 թի հանրապետութիւնը վերցրեց ստրկութիւնը կոյճիանելու, իսկ 1870 հանրապետութիւնը իրազորեց այնտեղ ընդհանուր ձայնաւորութեան իրաւունքը:

—Իշխան Բիւմարկ յայտնեց գերմանական պարլամենտում որ դիտաւորութիւն ունի պարլամենտ և կառավարչական օրգանները տեղափոխել Բերլինից մի օր և և ուրիշ քաղաք, օրինակ Կասել քաղաքը: Կարծում են որ այդ սպասուելով Բիւմարկ կամեցել է ներգործել պարլամենտի առաջիկայ ընտրութիւնների վրա: Իշխանը ասեց իր ճառի մէջ որ հարկաւոր է պարլամենտը և կառավարութիւնը անկախ դարձնել Բերլինի պէս մեծ քաղաքի ազդեցութենից:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐՆԵՐ

Այս օրերս Փարիզում «Առաջադիմութեան կուռքի» գաղտնի մէջ կատարվեցաւ քաղաքական միջոցութեան հանդէսը: Գառ առաջին օրինակն է ամբողջ Ներսիսայում: Մինչ այժմ շատ պետութիւնների մէջ ընդունված էր քաղաքական ամուսնութիւնը ու քաղաքական թաղումն, բայց քաղաքական միջոցութիւն դեռ չը տեսնված ըստ է: Գաղաքական ամուսնութիւնը և թաղութիւններին օրէնքներով, որ այդ ծիսակատարութիւնների մէջ ոչինչ սուրբ խորհուրդ չը կայ, այնպէս որ այդ երկու հանդէսներն էլ օրէնքի հիման վրա ընդունված է կատարել մարդու ցանկութեան համեմատ, այն ինչ միջոցութիւնը մինչև այժմ ընդունվում էր իբրև խորհուրդ, որը կարելի էր կատարել միայն եկեղեցու

միջոցով: Ահա թէ ինչպէս է նկարագրում մի ֆրանսիական թերթ այդ տարօրինակ հանդէսը: —Գաղտնիք լի էր հասարակութեամբ, ժողովը բացվելուն պէս կնքաճայրն ու կնքաճայրը ներկայացրին հանդիսականներին իրանց սանիկին ու նրա ծնողներին: Ս. Մուրի կարգաց մի ճառ, որի մէջ նա բացատրեց ներկայ գտնվողներին կնքաճայր ու կնքաճայր բարոյական պարտաւորութիւնները և նրանց վերաբերմամբ, որ նուրբ ամեն միջոց գործ պիտի դնեն մտնուելին օրինաւոր, հասարակութեան օգտակար անգամ դարձնելու համար: Այդ խօսքերը ընդունվեցան մեծ ծափահարութեամբ: Ընդունվեցան անգամները երկրորդը, պ. Պրոտուա նոյնպէս մի ճառ ասեց և վերջը առաջարկեց երկխոյսի հանդէսը համակրութեամբ ընդունվեցաւ և կնքաճայրը սկսեց փոքր հաւաքել: Ընդամենը զոյգացաւ 22 ֆրանկ 75 սանտիմ: Կուռքի սնդակները այդ գումարի վրա աւելացնելով 3 ֆրանկ, գումարը հասաւ 25 ֆրանկի: Վերջը յայտնեցին որ երկխոյսն ստանում է Լուի և Լուիս անունները և դրանով ամբողջ միջոցութեան ծէսը վերջացաւ:

\*\*\*

Կարտուէ քաղաքի մի ընտանիքին պատկանող երկու երիտասարդները շատ ժամանակ չէ որ ինքնասպանութիւն էին գործել, նոյն իսկ այն ժամանակ, երբ կեսերի բոլոր դժուարութիւնները վերջացած կարող էին համարել և նոր երջանիկ կեանք էր սպասում նրանց ապագայում: Կենդանի մնացել էր երբորդ եղբայրը, որը առաջինների պէս ոչինչ նշույններ չէր ցոյց տուել հոգեկան հիւսադութեան: Բայց այդ վերջին էլ հետեց առաջինների օրինակին և կամենալով ինքնասպանութիւն գործել, միայն մի բաւարեց իրան: Այդ ընտանիքի գաւառներին ձգտումն դէպի ինքնասպանութիւն մինչև այժմ մնում է անբացատրելի գաղտնիք:

\*\*\*

Վիեննայում այս օրերս բանտարկվեցաւ մի կարգից դուրս ճարտիկ խաբէբայ: Գառ մի քանաւոր տարեկան, բաւական համակրելի դէմքով, շատ նուրբ մանիկներով մարդ է, որ փետրվարից սկսած կենում էր «Goldenes Lamm» հիւրանոցում, կրելով կոմս Զօֆմանի անունը: Նա իրան ձեռքներում էր իբրև մի շատ հարուստ անդլիացի կալուածատէր, որ Լօնդոնում ունի իր սեփական տուն և որ այժմ դադարում է մի շատ մեծ գործի պրօեկտով, այսինքն մտադիր է մի ընկերութիւն կազմել Հալբից մինչև Փարիզ ջրանցք շինելու համար: Այդ նպատակով նա ծանօթացել էր Վիեննայի արիստոկրատներին և ֆինանսիստներին: Գառ, բայց վերջը բանը պարզվեց, յայտնվեցաւ որ դա կարլուստի մի հասարակ գործակատար է Կարլ Զօֆման անունով: Գառ 17 տարեկան հասակից թողնելով իր հայրենիքը ամբողջ աշխարհ պտտել էր բազմ օրերում և այդ ճանապարհորդութիւնները նպատակ էին նրան մի քանի լեզուներ ուսումնասիրել ու սեփականացնել արիստոկրատ մարդու ձևերը և սովորութիւնները: Զօֆմանը—յայտարար էր— մայրաքաղաքներին, Պետերբուրգ, Նա յայտնվեցաւ իբրև Ամերիկայի կոնսուլ և միայն վեց ամիսը յետոյ տեղեկութիւն ստացվեցաւ Վաշինգտոնից, որ ռուսաց կառավարութիւնը չը պէտք է ճանաչի դրան այդ պաշտօնում: Բայց Զօֆմանը դարձեալ չը հրաժարվեց կոնսուլի տիտղոսից, այնուհետև նա ճանապարհորդում էր իբրև շվեյցարական կոնսուլ: Հետևից ֆորսուսում այդ ժամանակ դիտարկութիւն կար երկաթուղու մի նոր դիմանկացնել և Զօֆմանը խելոյն յայտնվում է այնտեղ բերելով Պետերբուրգից կեղծ հաւատարմաթղթեր, ստանում այնտեղի բանկից 200.000 ռուբլի, իբր թէ մասնակցելու երկաթուղու շինութեան մէջ և անհետանում է: Քիչ ժամանակից յետոյ նա գալիս է Բերլին իբրև մի հաւատարմաւոր, գեղեցիկ բնակարան է վարձում և ընդունվում է այնտեղի նշանաւոր ընտանիքներում: Բայց այդ նոր գրութիւնը երկար չէ տևում: Գլոցիան սկսում է կասկածներ տանել և Զօֆմանը այդ նկատելով իսկոյն անհետանում է Բերլինից և օւղեւորվում է Լօնդոն: Գալով Լօնդոն նա իրան յայտնում է իբրև դիւրեկտոր մի շատ հարուստ անգլիոներական ընկերութեան ջեյնիսայում: Այդտեղ էլ պօլիցիան հոտը առնում է, բայց նրան դարձեալ աջող-

վում է ազատվել և նա կրկին վերադառնում է Գերմանիա ճանապարհորդելով մի քաղաքից դէպի միւսը և սեփականացնելով այս անգամ դարձեալ մի նոր տիտղոս,—այն է Աւստրիայի թագաւորական քարտուղարի: Թագաւորական պաշտօնով Զօֆմանը սկսում է ամեն տեղ զանազան պատուէրներ տալ մագաղաններում և դրա համար տոկոսներ առնում: Գալով Համբուրգ, նաւերի մի գործարանից նրան աջողվում է ըստաւ 16.000 գուլդէն, պատուիրելով այնտեղ մի նաւ թագաւորական համար: Այդ երեկի կոմսի համարձակութիւնը այնտեղ է հասնում որ երկու ամիս սրանից առաջ գալիս է նա Վիեննա և դարձեալ իրան թագաւորական քարտուղար անուանում: Զօֆման յաճախում էր ամենալաւ հասարակութիւն և նորից զանազան պատուէրներ անում խանութների մէջ: Նոյն իսկ այդ գործումն էլ բռնված է նա: Մի խանութում նա պատուիրած է լինում 22.000 գուլդէնի կահկարասիք թագաւորական համար, բայց այս անգամ պօլիցիայի ձեռքից էլ չը կարողացաւ ազատվել: Նա բանտարկվեցաւ և նրա բոլոր խաբէբայութիւնները յայտնվեցան:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի: «Голосъ» լրագիրը հաղորդում է, որ թագաւորը և թագուհին իրանց երեխաների հետ Գատչինօ գալու առաջին օրից մինչև այժմ ամեն օր բաւական երկար ժամանակ զբօսնում են այդիկ և անանանոցի մէջ: Ստար լրագիրների բոլոր լուրերը թագուհու առողջութեան խանգարման մասին սուտ են: Երէկ թագաւորը և թագուհին անցնում էին Ս. Պետերբուրգի մէջ բաց կառքով առանց պահապանների: Իշխան Պետր Օլգերուբզով առողջութիւնը փոխադարձ գրութեան մէջ է:

ՀՈՍԿ, 30 ապրիլի: Պապը հրաժարական տեսութիւն ունեցաւ: Սերգէյ և Պապէ Ալէքսանդրովիչ և Կոնստանտին Կոնստանտինովիչ Մեծ Իշխանների հետ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի: «Правит. Вѣст.» լրագիրը հաղորդում է որ «Порядокъ» լրագրին արգելված է մանաւոր յայտարարութիւններ տպել մի ամիս ժամանակով:

ՓԱՐԻԶ, 1 մայիսի: Տունիսի բէյ ստորագրեց խաղաղական դաշնագիր ֆրանսիայի հետ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի: «Русскій Инвалидъ» լրագիրը հիշեցում է զօրքերի հազուատի ձեռի փոխելու լուրը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի: Այսօր երեկոյան 7½ ժամին վախճանվեցաւ Իշխան Պետր Գէօրգիևիչ Օլգերուբզովի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 97 ռ. 25 կ., երկրորդ 94 ռ. 37 կ., երրորդ 94 ռ. 75 կ., չորրորդ 94 ռ. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսերը արժէ 224 ռ., երկրորդ 217 ռ. 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսերը արժէ 92 ռ. 87 կ., երկրորդ 93 ռ. 12 կ., երրորդ 93 ռ., ոսկի 8 ռ. 1 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 24,43 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 209 մարկ, Փարիզի վրա արժէ 257 ֆրանկ 50 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը դանդաղ է:

Խմբագիր—Հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

# Յ Ե Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Արդէն վաճառուած է

ԻՆՁ ԲԱՆ Է

ԺԱՆՏԱԽՏԸ

Ինչ բանով կարելի է փրկուել նորանից և այլ տարափոխիկ տկարութիւններից: Ժողովրդական և հասարակաց մատչելի խրատ բժշկ Պ. Ա. Իլինսկոյ:

Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրանց Գինն է 15 կոպ. 100-նորով գնողներին զինքն կը լինի: Մեր հասցէն՝ Վ. Զրիւն

А. Гуламирancy

1—5 (2)

Կ. Լ. Չ. ՊՈՊՈՎ ԵՂ ԲԱՅՐՆԵՐԻ ԱՌԵՏՐԱԿԱՆ ՏԱՆ ԿՈՂՄԻՑ ՄՕՍԿՎԱՅԻ ՄԷՋ: Ամենակարճ ժամանակամիջոցում մենք կը բանանք թիֆլիսի մէջ մեր առևտրական տան թէյի վաճառումն մեծ քանակութեամբ և մաս մաս: Խանութը կը լինի Գոյովնակայա փողոցի վրա Միրիմանովի տանը: Խանութը կը ստանայ ԱՄԵՆԱԼԱԻ ԹԷՑ, որ կշռված կը լինի Մոսկւայի մեր գլխաւոր խանութի մէջ մեր անձնական ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ:

144 Արժուանք գալերէա 144  
ամենակամա պահեստ  
մերէլի և հայկերէնի:

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ  
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цена 25 коп.

Մինչև այժմ չեղած ԵԿԵՆՁԻ ԻՊ. ԲԺԻՇԿ ԸՄԻԴՏԻ, որ կատարելագործված է բժշկական ՄԱՎՐԻՆԻ ԴԵՅՁԻՑ: Ընդհանրապէս ամեն տեսակ խոլերիկութիւն, եթէ նա բնական չէ: ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՐՆԱՆՆԵՐԸ յետոյ ուղարկվում է ՄԻ ԸԻՇԿ այդ իւղից, մանրամասն խոլերիկութեան մասին: Եյդ իւղը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԴԵՂԱՏՈՒՆՆԵՐԻՑ և ԵԼԵՔՍԱՆԴՐ ՎԵՆՅԵԼՑԻ, Կազանիցայ փողոց № 3:

2րդ նոյնիով մաքսի աւելանալուն ապրանքները առաջիկայ գներով կը ծախվին.  
ԿՕՆԳՕ-ԹԷՑ 1 ր. 5 Կ. և 1 ր. 10 Կոպ., շատ Լաւ ՄՕՆԻՆԳ 1 ր. 20 Կ. և 1 ր. 40 Կ., հիանալի ԿԱՅՍԱՌԻ 1 ր. 60 Կ. և 1 ր. 80 Կ. և ԱՄԵՆԱԼԱԻ ԹԷՑ 2 ր. առանց թղթի: Անգլիական ընկերութիւնը 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200 ր. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն ԲԱՐՆԱՐԻ ԹԱՄԲԵՐԸ, ջանասիր ԿՈՂՊԷՔՆԵՐԸ, Տուրքիոյ ԳՐԻՇՆԵՐԸ և Էկտրակո կակաօ-շօխոյրի ծախելու համար, որոնք փարիզի հանգիսի ժամանակ ոսկէ մեզալ ստացան: ՀՈՏԱԻՏ ԹԷՑԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65 Կ. և ամենալաւ 2 ր. 30 Կ.: Վաճառականներին օգտուէա է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ր., կոնֆէկտներ հազի դէմ 60 Կ. ֆունտը: 67—100

Վերականգնեցող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձնող: Գինը 2 ր. շինը, ՓՈՍՏԱՅՈՎ ուղարկված 2 ր. 49 Կոպ.: ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ:



Մի և նոյն տեղը ԻՆՆԱՅԻ ԻՊ. ԲԺԻՇԿ, մազերը ամրացնող համար, 1 ր. ամանը փրձին զլխացաւի դէմ, ՏՈՒԱԼԻՏԻ ՍԱՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն: 63—100

Տպագրութեան համար պատրաստվում է մեր ժողովածուի ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ: Այս հրատարակութիւնը բաղկացած կը լինի շատ հատորներից, որոնք հետզհետէ ի լոյս կընծայվին. նոքա պէտք է բովանդակ են իրանց մէջ հայ ժողովրդեան բերանացի աւանդութիւնները. —ԷԲԻԱԹՆԵՐ. ԺՈՂՈՎԱԳԱՆ ԵՐԳԵՐ. ԲԱՌԵՐ ԵՒ ՈՃԵՐ. ԱՌԱՎՆԵՐ. ԱՌԱԿՆԵՐ. ԱՆԷԹՐԵՆԵՐ. ՕՐԷՆԱՆՔՆԵՐ. ԵՐԳՈՒՄՆԵՐ. ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ. ՇՈՒՏ-ԱՍԵԼՈՒԿՆԵՐ. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ և ՊԱՐ-ԵՐԳԵՐ:

Որոշ համար լի յուսով դիմում ենք մեր ազգայնոց, ընդհանուր ուժով օգնելու մեզ, ուղարկելով պատշաճաւոր նիւթեր, բուն տեղական բարբառով: Այդպիսով կը պատուէ կոչենանք յիշել, որպէս հրատարակութեան աշխատակիցներ, ուղարկելով նոցա մի մի օրինակ բոլոր հատորներից:

Մեր հասցէն՝

Тифлисъ. Въ частную лечебницу, доктору Баграту Навасартянцъ.

ՄԻՆՁԵՒԻ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ ՎԵՐՁԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ԱՅՍ ՎԵՑ ԳՐԳԵՐԸ:

- 1) Երկու մանրավէպ Ալֆոնս Դոդէից Թարգմ. Ն. Տէր-Աւետիքեանի, գինն է 15 Կ.
- 2) Պոգնանու ուսուցչի օրագրից, Թարգմ. Տ. Նազարեան: . . . . . 20 Կ.
- 3) Պարսկ ժպիւր, ինքնուրոյն բանաստեղծութիւններ: Ն. Տ. Աւետիքեան: 25 Կ.
- 4) Ճանապարհորդութիւն Ղարաբաղում, Ա. ցախեցի . . . . . 30 Կ.
- 5) Ծաղիկի և ծաղկահատութիւն, Թարգմ. Տ. Նազարեանից: . . . . . 15 Կ.
- 6) Վերա խօսակ, բանաստեղծութիւններ Ն. Տ. Աւետիքեան: . . . . . 50 Կ.
- Այս վեց գրքի գինն է միասին 1-50 կոպէկ: Առանձին մէկի համար բաժանորդագրութիւն չէ ընդունվում, բացի «Քնար խօսակից» որի համար առանձին կարելի է ստորագրել և քննարկ հինգը առանձին: Հրատարակիչ Տեղան Յ. Նազարեան:

- Մանուկ տալից դուրս եկաւ և վաճառվում են Կենտրոնական Գրալաճառանցում հետեւեալ գրքերը:
1. Հայը և Հայաստանը օտարների աչքում, հրատարակական դասախօսութիւն ընթերցում թիֆլիսի ժողովարանում մայիսի 17-ին 1879 թ. Արգար Յովհաննէսեանի. Թ. 1881 թ. Գ. 30 կոպ.
  2. Մտաւոր ֆիզիքական և բարոյական ինքնակրթութեան մասին, խորհուրդներ այն երիտասարդներին, որոնք կանգնել ասպարէզը մանուկ և ցանկանում են կանոնաւորապէս պատրաստուել ուսումնական և հասարակական գործունէութեան համար. հեղ. Ջոն Ստիւարտ Բլեկլի, Թարգ. Գր. Շահբազարեան Տ. 1881 թ. Գ. 60 Կ.
  3. Հենչէլի. Բանաւոր և զբաւոր հաշուելու խնդիրներ ծխական դպրոցների համար փոխադրից Ս. Մանգրինեանց 1-ին և 2-րդ տարի, Թ. 1881 թ. Գ. 40 Կ.
  4. Քնար Ժողովրդական երգեր հեղ. Խաչ. Տէր-Խաչատրեանց, Երեւան 1880 թ. Գ. 45 Կ.
  5. Նոյն տեղը վաճառվում են հետեւեալ գրքերը:
  6. Մարկոս Աւրելիոս կայսեր իմաստասիրական և խրատական թղթերը, Վ. Ենետիկ Գ. 1 ր. 50 Կ.
  7. Բիշէշիոյ. Պատմական վերաբանութիւն Ք. Վ. Սէնդին Գաղղիացւոյ Վ. Ենետիկ Գ. 1 ր. 50 Կ.
  8. Մազադիին է վերաբանութիւն Պ. Յուլիոսի Սանտոյ. անգամ Գաղղիայ ձեմարանին, Վ. Ենետիկ Գ. 1 ր.
  9. Սոդ. Կենտրոնի քերթում ի մահն Արեւի Թարգ. Հ. Մանուկի Վ. Ջախ-Ջախեան Վ. Ենետիկ Գ. 1 ր. 75 Կ.
  10. Ֆենկոյի Արկադե Տեղեմաշայ, Թարգ. Եղեարդայ Վ. Հուրմուկեան Արքեպ. Շիրակայ Վ. Ենետիկ Գ. 3 ր. 50 Կ.
  11. Առակք Եղովրտի, Թարգ. ի գաղղիական լեզուէ Հ. Մինաս Վ. Բժշ-Կեան Վ. Ենետիկ Գ. 2 ր. 50 Կ.
  12. Յուլիոսի Կեսարու յիշատարանը գաղղիական պատերազմին, Թարգ. Հ. Արսենի Վ. Բազարառեանց Վ. Ենետիկ Գ. 1 ր. 75 Կ.
  13. Աշխարհագրութիւն հին և նոր Հայաստանեայց դպրատանց տղայոց հայոց համար Հ. Մանուկի Վ. Քաջուրի Վ. Ենետիկ Գ. 1 ր. 50 Կ.
- Օտարաբաղադրացիք ծանապարհի ծախք են վճարում իւրաքանչիւր բուբուն 10 Կ. առանց փողի պատուէները չեն կատարվում:

| Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ |            |                           |               |
|---------------------------------------|------------|---------------------------|---------------|
| Համեմատեցէ թէյի ֆունտը                | 1 ր. 5 Կ.  | Մոսկւայից բերվող թէյի հետ | Փ. 1 ր. 30 Կ. |
| —                                     | 1 ր. 10 Կ. | —                         | Փ. 1 ր. 40 Կ. |
| —                                     | 1 ր. 20 Կ. | —                         | Փ. 1 ր. 60 Կ. |
| —                                     | 1 ր. 40 Կ. | —                         | Փ. 1 ր. 80 Կ. |
| —                                     | 1 ր. 60 Կ. | —                         | Փ. 2 ր. —     |
| —                                     | 1 ր. 80 Կ. | —                         | Փ. 2 ր. 50 Կ. |
| Ամենալաւը                             | 2 ր. —     | —                         | Փ. 3 ր. —     |
| 78—100                                |            |                           |               |

ԻՆՁ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԿ-ՄԱՍՏԵՐԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետեւ այդ մասը գաղղիները ստանում է թէյ ուղղակի պլանտատորներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականա՛նում է փոքր շահով: Այդպիսով կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կախա և շօխաղ-Փրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէյ ամեն տեղ, անկողիներ, հրացաններ, ընկժովերներ, կողպէքներ, մատուցարաններ, ա, մաններ, դանակներ, գզալներ, թէյամաններ, բաժակներ, թմաքեր, գուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մակիւնտներ, կարկնիք, թուղթ, մատիա-ներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեւի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէյ ուրիշ տեղ: Արժուանք գալլէրէում 100—93

ՎԱՃԱՌՈՒՄՆ՝ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՃՐՃԻՆ ԼԵՔՆԱՆՆԵՐ 1 ր., ԲԱԺԱԿՆԵՐ 12 Կ., ԶՐԱՄԱՆՆԵՐ 50 Կ., հրացաններ 20—100 ր., ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ 5 Կ. մինչև 5 ր., ՄԱՀԱԿԱՆՆԵՐ 5—50 ր., ժիւղներ 75 Կ., փարակ-

ներ 4 ր., ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ 1 ր. տղամարդկեանց 14 ր., ԳԼԽԱՐԿՆԵՐ 1 րուբլ, մակիւնտներ 6 ր., հին պորպէյն և խերս 1 ր. 20 Կ. շինը, կոնիակ առաջին տեսակի 1 ր. 75 Կ., ՊԵՂՈՒԼԻ 50 Կ. թէյամաններ 25 Կ., ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՑ 1 ր. 40 Կ. առանց թղթի: Ծախվում են ԱՆԿԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ԱԼԲՈՄՆԵՐ շատ էժան: 7—15

ՇՈՒՏՈՎ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԿԸ ՄՏՆԻ  
«ԷՍ ԷԼ ԻՄ ՍԱՋԸ»  
անունով գիրքը, որ պարունակում է իր մէջ 90 դեռ լոյս չը տեսած բանաստեղծութիւններ:  
Օտարաբաղադրացիք կանխիկ մէկ բուբլ ուղարկելով, դիմում են ուղղակի հեղինակին հետեւեալ հասցէով.  
«Чрезъ Просковейское Почтовое отдѣленіе въ городъ Семѣяго-Креста (Савранполье. губ.). Учителю Семѣну Сафаріанцу.»

Ռուսիոյ Ամերիկայի տուեարական մագազինում, ծախվում է, Աւստրիայի ըրակի գերանդիք (կոսաներ) հարիւր հատն 55 բուբլ լիով: Գլխովայա փողոց գալլէրէյ Արժու-նի: 7—10